

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N2

«5» օգոստոսի 2022թ.
ք. Հրազդան

ՀՐԱՋԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԴԱԴԱՐԱԾ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ՄԱՆԴԱՏԸ «ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ»
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԻ
ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՋՈՐԴ ԹԵԿՆԱԾՈՒԻՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հրազդան համայնքի ղեկավարի 2022 թվականի հուլիսի «26»-ի «Հրազդան համայնքի ավագանու անդամ Գերասիմ Վահագնի Ասատրյանի՝ ավագանու անդամի լիազորությունները դադարեցնելու մասին» N1 արձանագրությունը, թիվ 26 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2022 թվականի օգոստոսի 5-ի «Կոտայքի մարզի Հրազդան համայնքի ավագանու 2021թվականի դեկտեմբերի 5-ի ընտրություններին մասնակցած կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակներում ընդգրկված, ինքնաբացարկ ներկայացրած (մանդատից հրաժարված) ավագանու անդամի թեկնածուների գրանցումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N -1-Ա որոշումը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 141-րդ հոդվածի 8-րդ մասով՝ թիվ 26 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովն

ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է.

Հրազդան համայնքի ավագանու «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակից ընտրված և լիազորությունները վաղաժամկետ դադարած ավագանու անդամի մանդատը տրվում է «Քաղաքացիական Պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակի հերթական հաջորդ թեկնածու Ղեվոնդ Հովհաննեսի Կասպարյանին:

Հանձնաժողովի նախագահ՝ *Ա.Լ.Ճ. Մ. Կասպարյան*
Նախագահի տեղակալ՝ *Ս.Գ. Գևորգյան*
Հանձնաժողովի քարտուղար՝ *Ս. Ս. Կասպարյան*
Ա. Մ. Կասպարյան *Ա. Մ. Կասպարյան*
Ս. Ս. Կասպարյան

